# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
# Շ Ի Ր Ա Կ Ի   Մ Ա Ր Զ
# Գ Յ Ո Ւ Մ Ր Ի   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի   Ա Վ Ա Գ Ա Ն Ի

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«<u>25» մարտի</u> 2015 թվական N 29–Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԽՃՈՒՂԻ N 1/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՇՈՏ ԵՎ ՀԱՍՄԻԿ ԻԼՈՅԱՆՆԵՐԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման ու տնօրինման կարգը հաստատելու մասին>> N 912-Ն որոշման 34-րդ, 34.2-րդ և 35-րդ կետերի պահանջները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքի Ախուրյանի խճուղի N 1/9 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված, դրա նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված 4,66 (չորս ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով աստիճանները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 50,27 (հիսուն ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 25 (քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը կառուցած քաղաքացիներ Աշոտ և Հասմիկ Իլոյաններին:
2. Տարեկան վարձավճարի չափ սահմանել 120.000 (հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

| **Կողմ (15)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ(0)** |
|---|---|---|

Ա. Ադամյան ____________________

Գ. Ադամյան ____________________

Ա. Բաղրամյան ____________________

Մ. Գաբոյան ____________________

Ա.Գրիգորյան ____________________

Վ.Եդիգարյան ____________________

Գ.Թաթարյան ____________________

Հ. Խաչատրյան ___________________

Տ.Հովհաննիսյան ___________________

Վ. Հունանյան ___________________

Ն. Մեսրոպյան ___________________

Ռ.Մխիթարյան ___________________

Վ.Շիրինյան __________________

Մ. Սահակյան ___________________

Տ. Փանոսյան ___________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«25» մարտի 2015 թ.**